# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

07 հունիսի 2024 թվականի թիվ 57-Ա

ք. Երևան

## ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի մայիսի 17-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 26 վարչական վարույթի նյութերը, ***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-ի (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելու Օրենքի դրույթի պահանջի խախտման փաստ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի մայիսի 07-ի թիվ 25-Ա հրամանը, իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2024 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը 11:30-ից 12:30-ը Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի մայիսի 07-ի թիվ 25-Ա հրամանի շրջանակներում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են թվով 92 հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «Երկիր Մեդիա», «Հ2», «Նոյան տապան», «5-րդ+», «CNN», «Euronews», «Мир 24», «Россия 24», «Հայ TV», «Թավա TV», «Խաղալիք», «Մուզզոն», «Կինոման», «Լայք Հաք»,

«Ֆիթնես», «Բազմոց TV», «5-ий канал», «Домашний», «СТС», «ABN», «Кинопремьера», «TNT», «НТВ право», «Пятница ! international», «НТВ мир», «ТВ-3 international», «TNT-4», «НТВ стиль», «НТВ сериал», «Перец», «Кинокомедия», «Наше новое кино», «Кинохит», «Киносвидание», «Индийское кино», «Киномикс», «Киносемья», «Мужское кино», «Киносерия», «Киноужас», «Родное кино», «Иллюзион», «Телекафе», «Еврокино», «Fox live», «AMEDIA 1», «Fox», «Матч! планета», «Бокс ТВ», «UDAR», «Eurosport 1», «Драйв», «Eurosport 2», «Авто плюс», «Discovery», «National geographic», «Nat Geo Wild», «Живая планета», «В мире животных», «TLC», «Мужской», «365», «Глазами туриста», «Живи активно», «HDL», «Food network», «Amedia premium», «Моя планета», «История», «Наука», «Телепутишесвия», «Кто есть кто», «КВН», «Nickelodeon», «О!», «Музыка первого», «СТС kids», «TNT music», «MTV live», «Nick toons», «Шансон ТВ», «REN TV», «Дом кино премиум», «Оружие», «Bridge Hits», «Bridge classic», «Bridge Deluxe», «Bridge Шлягер», «Bridge rock»:

Արձանագրությունը կազմելու պահին ցանցային օպերատորի ղեկավարը կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձը տեղում դիտարկման վայրում չի եղել, և տեղում դիտարկումն իրականացվել է առանց ցանցային օպերատորի ղեկավարի կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի:

Օրենքի 42-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է՝

«Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:»:

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ մասի՝ եթե օպերատորի ղեկավարը կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձը հրաժարվում է ստորագրել և ստանալ արձանագրության երկրորդ օրինակը կամ տեղում դիտարկման վայրում չէ, ապա արձանագրության երկրորդ օրինակն առաքվում է փոստով:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ 2024 թվականի մայիսի 16-ի թիվ Ե/03/03.1/403-23 գրությամբ ցանցային օպերատորին է ուղարկվել արձանագրության մեկ օրինակը: Նշված գրությամբ ցանցային օպերատորին տեղեկացվել է նաև, որ Օրենքի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող են դրանք ներկայացնել Հանձնաժողով:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է նաև ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների արձանագրությունում նշված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից 2024 թվականի մարտի 16-ին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկի համադրություն, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

Ցանցային օպերատորի կողմից ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում բացի փաստացի վերահաղորդվող ծրագրերից առկա են նաև «Cartoon

Network HD», «Cartoonito», «Ամեդիա», «Охотник и рыболов HD», «Рыболов», «Зоо TV SD», «Спортивный», «Paramaount Comedy», «Բրիջ ՏՎ», «Բրիջ ՏՎ Ռուսկիյ Խիտ», «Բրիջ ՏՎ Ֆրեշ», «Поехали!», «Лапки LIVE», «AMEDIA PREMIUM 1», «AMEDIA PREMIUM HD», «AMEDIA HIT HD», «Русская ночь», «Song TV ARM», «ARM TOON TV» և «Ազատություն TV» տեսալսողական ծրագրերը, որոնք արձանագրություն կազմելու պահին չեն վերահաղորդվել, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները:

Միաժամանակ պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում առկա չեն «Киносемья», «Киноужас», «Родное кино», «Матч! Планета», «Живая природа», «Глазами туриста», «Живи активно», «Кухня», «THT music» և «BRIDGE ROCK» տեսալսողական ծրագրերը, որոնք փաստացի վերահաղորդվել են արձանագրությունը կազմելու պահին:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2024 թվականի մայիսի 17-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2024 թվականի մայիսի 14-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2024 թվականի մայիսի 20-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Ցանցային օպերատորը հարուցված վարչական վարույթի ընթացքում 2024 թվականի մայիսի 22-ին էլեկտրոնային գրություններով Հանձնաժողով է ներկայացրել իր պարզաբանումները «Киносемья», «Киноужас», «Родное кино», «Матч! Планета», «Живая природа», «Глазами туриста», «Живи активно», «Кухня», «THT music» և «BRIDGE ROCK» տեսալսողական ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև իրավատերերի հետ կնքված պայմանագրերը և համաձայնագրերը:

Ըստ ցանցային օպերատորի կողմից ներկայացված պարզաբանումների՝

Հանձնաժողովը ցանցային օպերատորի մոտ տեղում դիտարկումն իրականացրել է 2024 թվականի մայիսի 14-ին, սակայն Համաձայնագիրը կնքվել է սույն թվականի մայիսի 10-ին և որպես ապացույց Հանձնաժողով է ներկայացվել «ԳԼՈԲԱԼ ՔՈՆԹԵՆԹ» ՍՊ ընկերության և ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-ի միջև 2024 թվականի մայիսի 10-ին կնքված Լիցենզիոն Համաձայնագիր 008-05/24, համաձայն որի՝ 2024 թվականի մայիսի 01-ից 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցանցային օպերատորն իրավունք ունի, ի թիվս այլնի, վերահաղորդել նաև «Киносемья», «Киноужас», «Родное кино», «Матч! Планета», «Живая природа», «Глазами туриста», «Живи активно», «Кухня», «THT music» տեսալսողական ծրագրերը,

«ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության և ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-ի միջև 2024 թվականի հունվարի 01-ին կնքված TCS-022-ի Պայմանագրի Հավելված 1-ի՝ ցանցային օպերատորն իրավունք ունի 2024 թվականի հունվարի 01-ից, ի թիվս այլնի, վերահաղորդել նաև «Բրիջ ՏՎ Ֆրեշ» տեսալսողական ծրագիրը, որի վերաբերյալ ցանցային օպերատորը հայտնել է, որ Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում տեսալսողական ծրագրի անվանումը նշված է ըստ կնքված պայմանագրի՝ «Բրիջ ՏՎ Ֆրեշ», իսկ հեռուստատեսությամբ տեսալսողական ծրագրի անվանումը «Բրիջ Ֆրեշ/Ռոք» է գրված, և որպես ապացույց ներակայացրել է էկրանի լուսապատճենը:

Հանձնաժողովը, ղեկավարվելով Օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով դիստրիբյուտուի գործունեություն իրականացնող ««ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 14-ի տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը, 2021 թվականի դեկտեմբերի 30-ին ««ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրերի ծանուցումը հաստատելու մասին» թիվ 202-Ա որոշման համաձայն՝ հաստատել է ««ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրերի ծանուցումը՝ համաձայն Հավելվածի, որտեղ ներառված են հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «Bridge TV Deluxs», «Bridge TV Шлягер», «Bridge TV Фреш»:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

**Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝**

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը»:

Համաձայն **Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի**՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

**Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 11-րդ և 18-րդ** մասերը սահմանում են՝.

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

**Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանումով**

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»:

**Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝** սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

**«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

**Նույն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին, Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և դիտարկման արդյունքում 2024 թվականի մայիսի 14-ին կազմված արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկի համադրության արդյունքում արձանագրել է, որ ցանցային օպերատորի կողմից փաստացի

վերահաղորդվում են մի շարք տեսալսողական ծրագրեր, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկից:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին, ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկին և հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորն իր գործունեությունն իրականացնում է՝ խախտելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը վերահաղորդել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Փաստում ենք նաև, որ ցանցային օպերատորը 2021 թվականի հուլիսի 22-ից (սփռման տարածքը՝ Կոտայքի մարզ) հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ Օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի Օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Հաշվի առնելով այն փաստը, որ տեղում դիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «Киносемья», «Киноужас», «Родное кино», «Матч! Планета», «Живая природа», «Глазами туриста», «Живи активно», «Кухня», «THT music» և «BRIDGE ROCK» տեսալսողական ծրագրերը, իսկ ցանցային օպերատորի կողմից նշված տեսալսողական ծրագրերի վերահաղորդումն իրականացվում է առանց պայմանագրերի, և միայն 2024 թվականի մայիսի 22-ին Հանձնաժողով ներկայացված «ԳԼՈԲԱԼ ՔՈՆԹԵՆԹ» ՍՊ ընկերության և ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-ի միջև 2024 թվականի մայիսի 10-ին կնքված Լիցենզիոն Համաձայնագիր 008-05/24 ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ցանցային օպերատորն ունի «Киносемья», «Киноужас», «Родное кино», «Матч! Планета», «Живая природа», «Глазами туриста», «Живи активно», «Кухня», «THT music» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքը:

Ինչ վերաբերում է «BRIDGE ROCK» տեսալսողական ծրագրին, ապա ցանցային օպերատորի կողմից բերված պատճառաբանությունն այն մասին, որ Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում տեսալսողական

ծրագրի անվանումը նշված է ըստ կնքված պայմանագրի՝ «Բրիջ ՏՎ Ֆրեշ», իսկ հեռուստատեսությամբ տեսալսողական ծրագրի անվանումը «Բրիջ Ֆրեշ/Ռոք» է գրված, այսինքն՝ «Բրիջ ՏՎ Ֆրեշ» («BRIDGE TV FRESH») և «Բրիջ Ֆրեշ/Ռոք» (BRIDGE ROCK) տեսալսողական ծրագրերը նույնն են, չի համապատասխանում իրականությանը, քանի որ ըստ «BRIDGE MEDIA» պաշտոնական կայքէջի, որը հանդիսանում է «BRIDGE ROCK» և «BRIDGE TV FRESH» տեսալսողական ծրագրերի իրավատերը, վերջիններս հանդիսանում են տարբեր տեսալսողական ծրագրեր՝ առանձին անվանումներով և առանձին լիցենզիոն պայմանագրերի համարանիշերով, այսինքն՝ «BRIDGE TV FRESH» տեսալսողական ծրագիրը ստեղծվել է 2021 թվականին և գործում է մինչև 2033 թվականի հունիսի 27-ը (լիցենզիոն համար՝ №Л033-00114-77/00659625), իսկ «BRIDGE ROCK» տեսալսողական ծրագիրը ստեղծվել է 2023 թվականին և գործում է մինչև 2031 թվականի հոկտեմբերի 12-ը (լիցենզիոն համար՝ №Л033-00114-77/0064768):

Հանձնաժողովը փաստում է, որ ցանցային օպերատորը մշտադիտարկման պահին փաստացի վերահաղորդել է «Bridge Rock» տեսալսողական ծրագիրը, որն, ի դեպ, ներառված չէ ցանկում, և համաձայն «ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության և ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-ի միջև 2024 թվականի հունվարի 01-ին կնքված TCS-022-ի Պայմանագրի Հավելված 1-ի՝ ցանցային օպերատորն իրավունք ունի 2024 թվականի հունվարի 01-ից, ի թիվս այլնի, վերահաղորդել «Բրիջ ՏՎ Ֆրեշ» (BRIDGE TV FRESH) տեսալսողական ծրագիրը, այսինքն՝ ցանցային օպերատորի պարզաբանումները հիմնավոր և բավարար չեն Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվությունը չկիրառելու համար:

Այսպիսով, ցանցային օպերատորի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի հատկանիշներին:

**Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝** կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

**Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

**Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.**

«Ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»

Հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 22-ի թիվ 58-Ա որոշմամբ ցանցային օպերատորը վարչական պատասխանատվության է ենթարկվել Օրենքի 57–րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տուգանվելով նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: Վարչական տույժ կիրառելու հիմք է հանդիսացել ցանցային օպերատորի կողմից տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելու Օրենքի պահանջի խախտման փաստը, ինչը նույնական է նաև տվյալ դեպքում:

**Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասը սահմանում է՝**

«Սույն հոդվածի 2-30-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված տույժի եռապատիկի չափով:»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ցանցային օպերատորը մեկ տարվա ընթացքում կրկնել է նույն խախտումը՝ տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելով, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասի հատկանիշներին:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով,32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով, 42-րդ հոդվածով, 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց՝***

1. ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-ի նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով կիրառված տույժի եռապատիկի չափով՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ-ին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2024թ. հունիսի 07
ք. Երևան